ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հաստատված է

Հասարակագիտության ամբիոնի

16.12.2020թ. թիվ 5 նիստում

“____”_____2020թ.

_____

ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 2020

1. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Հաշվետու տարում ամբիոնի ուսումնական աշխատանքների ծրագրված ծավալը, կատարված ուսումնական աշխատանքի ծավալը:
Հասարակագիտության ամբիոնի՝ հաշվետու տարում ուսումնական աշխատանքների ծրագրված ծավալը, կատարված ուսումնական աշխատանքի ծավալը գնահատվում են բավարար, քանի որ աշխատանքային պլանով նախատեսված անելիքներն ու առաջադրված ծրագրերն իրականացվել են ողջ ծավալով և արդյունավետորեն:
Հաշվետու տարում ամբիոնի մասնագիտությունների կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության մոտեցումներն ու քաղաքականությունը, որքանով է այն նպաստել ուսանողակենտրոն ուսուցմանը:
Ամբիոնի կողմից աշխատանքներ են իրականացվել՝ ուղղված ուսումնառության արդյունքների, և դրանց համապատասխան դասավանդման և ուսումնառության մոտեցումների ու մեթոդների արդիականացմանը: Դասավանդման և ուսումնառության մոտեցումների և մեթոդների պարբերաբար արդիականացման ուսումնասիրությունները և քննարկումները, դասավանդման նյութերի և ռեսուրսների արդիականացման շուրջ կատարված աշխատանքներն ամբիոնում, հիմք են տալիս արձանագրելու, որ դասավանդման և ուսումնառության ներկա մեթոդները արդյունավետ են: Մասնավորապես, խոսքը վերաբերում է որակի ապահովման չափանիշների լույսի ներքո ՄԿԾ-ի առարկայական նկարագրերի վերանայմանը և Էլեկտրոնային ԱՈՒՄՓ ձևաչափերի լիարժեք ներդրմանն ուղղված միջոցառումների և ջանքերի ձեռնարկմանը: Միանշանակ է, որ նշված քաղաքականությունը նպաստել է ուսանողակենտրոն ուսուցմանը: Այն բակալավրիատի և մագիստրատուրայի բոլոր կուրսերում ներդրվելու պարագայում առավել կբարելավվի մասնագիտական կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքների առաջընթացը:
Հաշվետու տարում ամբիոնում կիրառված ուսանողների գնահատման համակարգը, գնահատման բաղադրիչների ձևավորման մոտեցումները, ուսումնառության արդյունքներից հետ կապը և ակադեմիական ազնվության ապահովմանն ուղղված աշխատանքները:
Բուհում գործում է գնահատման բաղադրիչների միասնական համակարգ, և ամբիոնը ուսումնական գործընթացի գնահատումն իրականացնում է այդ բաղադրիչներով՝ գնահատման սահմանված չափորոշիչներին համապատասխան: Դա հնարավորություն է տալիս արձանագրել ուսումնական գործընթացի դրական վերջնարդյունքներ: Ակադեմիական ազնվության ապահովման նպատակով միջանկյալ և ամփոփիչ քննություններին դասավանդող դասախոսից բացի ապահովվվում է նաև ընթերակայի, գործնական պարապմունքներ անցկացնող դասախոսի, հնարավորության դեպքում նաև ամբիոնի վարիչի կամ դեկանատի ներկայացուցչի ներկայությունը:
Հաշվետու տարում ամբիոնի նիստերում քննարկված հիմնական հարցերը, իրականացված աշխատանքների գնահատման և բարելավման ուղղությամբ ընդունված որոշումները և հաստատված մեխանիզմները:
Հաշվետու տարում ամբիոնի նիստերում քննարկված հիմնական հարցերը վերաբերել են դասավանդման գործընթացի պատշաճ կազմակերպմանն ուղղված աշխատանքներին, պրակտիկաների կազմակերպման և անցկացման արդյունքների քննարկմանը, դրանց հաշվետվությունների վերլուծությանը, ինչպես նաև դրանց արդյունավետության բարձրացման ուղղությամբ ապագայում կոնկրետ ջանքեր ձեռնարկելու անհրաժեշտությանը, դպրոցներում և քոլեջներում պրակտիկայի կազմակերպման հիմնախնդիրներին: Բացի դրանից, քննարկվել են նաև միջանկյալ ստուգողական աշխատանքների հարցաշարերի, քննական հարցաշարերի հաստատումը, ամփոփիչ ավարտական քննությունների հարցաշարերի հաստատում, երաշխավորում հրապարակման, մագիստրոսական ատենախոսությունների, ավարտական և կուրսային աշխատանքների թեմաների հաստատում, դրանց կատարման ընթացքի նկատմամբ վերահսկողություն, դրանց նախապաշտպանության իրականացում, դասալսումների արդյունքների քննարկում, Google classroom հարթակում դասախոսների կատարած աշխատանքների և ըստ անհրաժեշտության ընթացիկ հարցերի քննարկում: Իրականացված աշխատանքները գնահատվում են դրական և բարելավման ուղղությամբ ձեռնարկվում են համապատասխան միջոցներ:

Հաշվետու տարում ամբիոնի նիստերում քննարկված հիմնական հարցերը, իրականացված

աշխատանքների գնահատման և բարելավման ուղղությամբ ընդունված որոշումները և հաստատված մեխանիզմները:		
Արձ.N, ամսաթիվ	Քննարկման հարցերը	Ընդունված որոշումները
Արձ.№8, 20.01.2020թ	1. Ամբիոնի դասախոսների հաշվետվությունները՝ Google Classroom էլեկտրոնային հարթակում իրենց կատարած աշխատանքի վերաբերյալ: 2. 2019-2020 ուստարվա առաջին կիսամյակում կատարված աշխատանքների ամփոփման և հարթակում դասախոսների գործունեության մշտադիտարկման անցկացման ու էլեկտրոնային աշխատանքի գնահատման մասին՝ մշտադիտարկման ցուցիչներին համապատասխան: 3. 2019-2020 ուստարվա առկա ուսուցման բակալավրիատի և մագիստրատուրայի և հեռակա ուսուցման 1-ին և երկրորդ կուրսերի 2-րդ կիսամյակի դասընթացների առարկայական նկարագրերի և թեմատիկ տրոհումների ներկայացման և հաստատման մասին: 4. Հեռակա մագիստրատուրա 3-րդ կուրսի մագիստրոսական ատենախոսությունների նախապաշտպանություն: 5. Առկա 3-րդ կուրսի կուրսային աշխատանքների պաշտպանություն: 6. Ընթացիկ հարցեր:	**ՈՐՈՇԵՑԻՆ -** Google Classroom էլեկտրոնային հարթակում ամբիոնի դասախոսների կատարած աշխատանքի հաշվետվություններն ընդունել ի գիտություն և աշխատել էլեկտրոնային հարթակում աշխատանքն էլ ավելի արդյունավետ դարձնելու համար: **ՈՐՈՇԵՑԻՆ –** Ներկայացված մշտադիտարկման և գնահատման արդյունքներն ընդունել ի գիտություն և աշխատել մյուս կիսամյակում էլ ավելի բարձր արդյունքներ ապահովելու ուղղությամբ: /կից ներկայացվում են մշտադիտարկման և գնահատման արդյունքները: **ՈՐՈՇԵՑԻՆ -** Հաստատել Հասարակագիտության ամբիոնի երկրորդ կիսամյակի ուսումնական ծրագրով նախատեսված առարկաների ուսումնամեթոդական փաթեթները: **ՈՐՈՇԵՑԻՆ -** Արաքսյա Աղաբաբյանի, Քրիստինե Աղաբեկյանի, Տարոն Խաչատրյանի, Արուս Հակոբյանի, Մերի Հարությունյանի, Սարգիս Հարությունյանի, Աննա Հովեյանի, Աստուր Միսակյանի, Սարինե Պապյանի, Օվսաննա Պետրոսյանի, Ռաֆայել Սարգսյան, Դավիթ Վարդանյանի, Մելանյա Քալաշյանի, Դերենիկ Սաֆարյանի մագիստրոսական թեզերը երաշխավորել հրապարակային պաշտպանության: **ՈՐՈՇԵՑԻՆ -** Կուրսային աշխատանքները պաշտպանած երեք ուսանողներին գնահատել գերազանց:
Արձ.№ 9, 27.02.2020թ	1. Հասարակագիտություն մասնագիտության հեռակա բակալավրիատի 3-րդ կուրսի մանկավարժական պրակտիկաների ընթացքը և Իրավագիտություն /մանկ./ մասնագիտության 5-րդ կուրսի մանկավարժական պրակտիկաների արդյունքները: **/զեկ. Ա.Կարեյան, Վ.Հովհաննիսյան/** 2. 2-րդ կիսամյակի միջանկյալ գրավոր աշխատանքների և ամփոփիչ քննությունների հարցաշարերի, քննական տոմսերի հաստատում: **/զեկ. դասախոսներ/** 3. Google Classroom հարթակում տարվող աշխատանքների մասին: **/զեկ. դասախոսներ/** 4. 2018-2019թթ. ռազմավարական պլանի կատարողականի քննարկում և 2020 թ. տարեկան գործողությունների պլանի հաստատում՝ ելնելով ՀՊՄՀ-ի ռազմավարական ծրագրի, ֆակուլտետների, ամբիոնների գործողությունների պլանների դրույթներից: 5. Ընթացիկ հարցեր	**ՈՐՈՇԵՑԻՆ –** Ամբիոնի վարիչի զեկուցումն ընդունել ի գիտություն: **ՈՐՈՇԵՑԻՆ –** Հաստատել 2-րդ կիսամյակի միջանկյալ գրավոր աշխատանքների և ամփոփիչ քննությունների հարցաշարերն ու քննական տոմսերը: **ՈՐՈՇԵՑԻՆ –** Google Classroom հարթակում տարվող աշխատանքների արդյունքները համարել բավարար: **ՈՐՈՇԵՑԻՆ –** Հաստատել 2018-2019թթ. ռազմավարական պլանի կատարողականը և 2020 թ. տարեկան գործողությունների պլանը: **ՈՐՈՇԵՑԻՆ –** Հաստատել վերականգնված ուսանողների ավարտական աշխատանքների թեմաներն և ղեկավարներին:

	/հայտարարություններ/:	
Արձ.№10, 30.03.2020թ	1. Միջանկյալների անցկացման փոփոխությունների քննարկում: 2. Հեռակա 5-րդ կուրսի միջանկյալների անցկացման մասին: 3. Առցանց ուսուցման ընթացքը, արձանագրված բացթողումները: 4. Պրակտիկաների և դրանց պաշտպանությունների մասին: 5. Թեզերի և ավարտական աշխատանքների կատարման ընթացքը: 6. Ընթացիկ հարցեր /հայտարարություններ/:	**ՈՐՈՇԵՑԻՆ –** Ամբիոնի վարիչի զեկուցումն ընդունել ի գիտություն: **ՈՐՈՇԵՑԻՆ –** Ամբիոնի վարիչի զեկուցումն ընդունել ի գիտություն: **ՈՐՈՇԵՑԻՆ –** Ամբիոնի վարիչի զեկուցումն ընդունել ի գիտություն: **ՈՐՈՇԵՑԻՆ –** Ամբիոնի վարիչի զեկուցումն ընդունել ի գիտություն: **ՈՐՈՇԵՑԻՆ –** Առկայի նախապաշտպանությունը կազմակերպել ապրիլի 22-ին:
Արձ.№ 11, 22.04.2020թ	1. Հասարակագիտություն մասնագիտության առկա բակալավրիատի 4-րդ կուրսի ավարտական աշխատանքների նախապաշտպանություն: /Զեկուցող՝ դասախոսներ / 2. Իրավագիտություն /մանկավարժություն/ մասնագիտության առկա մագիստրատուրայի 2-րդ կուրսի մագիստրոսական ատենախոսությունների նախապաշտպանություն: /Զեկուցող՝ դասախոսներ /	**ՈՐՈՇԵՑԻՆ /միաձայն/** – Հաշվի առնելով, որ ուսանողները ներկայացրել են ղեկավարների կողմից հրապարակային պաշտպանության երաշխավորված աշխատանքներ և նախապաշտպանությանը ներկայացրեցին նաև իրենց աշխատաքների հիմնական դրույթները, որոշեցին ամբիոնին հատկացված 10 աշխատանքներն էլ երաշխավորել հրապարակային պաշտպանության: Նշանակվեցին նաև աշխատանքների գրախոսները: **ՈՐՈՇԵՑԻՆ** /միաձայն/ - Մագիստրոսական 2 ատենախոսությունն էլ երաշխավորել հրապարակային պաշտպանության և նշանակել գրախոսներ:
Արձ.№ 12, 25.05.2020թ	1. Իրավագիտություն /մանկավարժություն/ մասնագիտության հեռակա բակալավրիատի 5-րդ կուրսի ավարտական աշխատանքների նախապաշտպանություն:	**ՈՐՈՇԵՑԻՆ /միաձայն/** – Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ուսանողները ներկայացրել են ղեկավարների և գրախոսների կողմից հրապարակային պաշտպանության երաշխավորված աշխատանքներ և նախապաշտպանությանը ներկայացրեցին նաև իրենց աշխատաքների հիմնական դրույթները, որոշեցին 29 ուսանողի ավարտական աշխատանք երաշխավորել հրապարակային պաշտպանության:
Արձ.№ 1, 02.09.2020թ	1. Ամբիոնի 2020-2021 ուստարվա ուսումնական ծանրաբեռնվածության /դասաբաշխում/ մասին: 2. Ամբիոնի 2020-2021 ուստարվա աշխատանքային պլանի քննարկում և հաստատում: 3. Մագիստրատրոսական և ավարտական աշխատանքների թեմաների ներկայացման և հաստատման մասին: 4. 2020-2021 ուստարվա առկա ուսուցման բակալավրիատի և մագիստրատուրայի առաջին կիսամյակի ուսումնական ծրագրով նախատեսված առարկաների ուսումնամեթոդական փաթեթների	**ՈՐՈՇԵՑԻՆ -** Միաձայն հաստատել աշխատանքային պլանը: **ՈՐՈՇԵՑԻՆ –** Ներկայացնել բոլոր չափանիշներին համապատասխանող թեմաներ: **ՈՐՈՇԵՑԻՆ -** Հաստատել Հասարակագիտության ամբիոնի առաջին կիսամյակի ուսումնական ծրագրով նախատեսված առարկաների ուսումնամեթոդական փաթեթները: **ՈՐՈՇԵՑԻՆ –** Քննարկումների արդյունքում որոշեցին հաստատել 2020-2021 ուստարում

	/ԱՈՒՄՓ/ հաստատման մասին: 5. Ընտրովի դասընթացների հաստատման մասին: 6. Google classroom հարթակում առցանց դասերի անցկացումը կազմակերպելու մասին: 7. Ընթացիկ հարցեր:	ամբիոնի՝ առկա բակալավրիատում և մագիստրատուրայում դասավանդվող ընտրովի դասընթացների առարկայացանկը: **ՈՐՈՇԵՑԻՆ** – Ամբիոնի վարիչի հաղորդումն ընդունել ի գիտություն:
Արձ.№ 2, 28.09.2020թ	1. Հասարակագիտություն և Իրավագիտություն /մանկ./ մասնագիտության առկա մագիստրատուրայի 1-ին կուրսի մագիստրոսական թեզերի ղեկավարների և թեմաների հաստատման մասին: 2. Հասարակագիտություն մասնագիտության առկա բակալավրի 4-րդ կուրսի ավարտական աշխատանքների ղեկավարների և թեմաների հաստատման մասին: **/զեկ. Է.Հովհաննիսյան/** 3. Հասարակագիտություն մասնագիտության 3-րդ կուրսի կուրսային աշխատանքների ղեկավարի և թեմաների հաստատման մասին: **/զեկ. Է.Հովհաննիսյան/** 4. 2020-2021 ուստարվա 1-ին կիսամյակի միջանկյալ գրավոր աշխատանքների հարցաշարերի և հարցատոմսերի հաստատման և տեղադրման մասին: **/զեկ. Է.Հովհաննիսյան/** 5. Ընթացիկ հարցեր:	**ՈՐՈՇԵՑԻՆ -** Միաձայն հաստատել Հասարակագիտություն և Իրավագիտություն /մանկ./ առկա մագիստրատուրայի 1-ին կուրսի մագիստրոսական թեզերի ղեկավարներին և թեմաները: **ՈՐՈՇԵՑԻՆ -** Միաձայն հաստատել Հասարակագիտություն մասնագիտության առկա բակալավրիատի 4-րդ կուրսի ավարտական աշխատանքների ղեկավարներին և ընտրված թեմաները: **ՈՐՈՇԵՑԻՆ -** Միաձայն հաստատել Հասարակագիտություն մասնագիտության 3-րդ կուրսի կուրսային աշխատանքների ղեկավարին և թեմաները: **ՈՐՈՇԵՑԻՆ –** Հաստատել /միաձայն/ 2020-2021 ուստարվա 1-ին կիսամյակի /բակալավրիատ և մագիստրատուրա/ միջանկյալ գրավոր աշխատանքների հարցաշարերն ու հարցատոմսերը:
Արձ.№ 3, 07.10.2020թ	1. Մարինե Արթուրի Կիրակոսյանի ԻԳ.00.02- Քաղաքական ինստիտուտները և գործընթացներ, միջազգային հարաբերություններ մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման <<Հակամարտությունների կարգավորման գործընթացի ժամանակ ժամանակավոր միջազգային կառավարման կիրառման հնարավորություններն ու արդյունավետությունը>> թեկնածուական ատենախոսության քննարկումը /գիտական ղեկավար պատմական գիտությունների դոկտոր Ռ. Կարապետյան/:	**ՈՐՈՇԵՑԻՆ -** Թեկնածուական ատենախոսությանը տալ կարծիք:
Արձ.№ 4, 20.10.2020թ	1.Հասարակագիտություն մասնագիտության հեռակա բակալավրի 5-րդ կուրսի ավարտական աշխատանքների ղեկավարների և թեմաների հաստատման մասին: /զեկ. Է.Հովհաննիսյան/ 2. Հասարակագիտություն մասնագիտության առկա բակալավրիատի 4-րդ կուրսի մանկավարժական պրակտիկայի ընթացքի մասին: /զեկ. Ա.Կոծինյան/ 3. Ամբիոնի դասախոսների հաշվետվությունները՝ Google Classroom էլեկտրոնային հարթակում իրենց կատարած աշխատանքի վերաբերյալ: /զեկ.	**ՈՐՈՇԵՑԻՆ** - Միաձայն հաստատել հասարակագիտություն մասնագիտության հեռակա բակալավրի 5-րդ կուրսի ավարտական աշխատանքների ղեկավարներին և թեմաները:

	դասախոսներ/ 4. Ընթացիկ հարցեր /հայտարարություններ/:	
Արձ.№ 5, 16.12.2020թ	1. Հեռակա մագիստրատուրա 3-րդ կուրսի մագիստրոսական ատենախոսությունների նախապաշտպանությունը: /զեկ. դասախոսներ/ 2. Հասարակագիտության ամբիոնի 2020թ. հաշվետվության հաստատման մասին: /զեկ. Է.Հովհաննիսյան/	**ՈՐՈՇԵՑԻՆ** – Աշխատանքները հանձնել գրախոսման և նախապաշտպանությունն իրականացնել 20.01.2021թ.-ին: ՈՐՈՇԵՑԻՆ-Միաձայն հաստատել Հասարակագիտության ամբիոնի 2020թ. հաշվետվությունը:

Պրոֆեսորադասախոսական կազմը								
	Կանայք	Դոկտոր	Պրոֆեսոր	Գիտ.թեկն.	Դոցենտ	Ասիս-տենտ	Դասախոս	Ընդ-նը
Հաստիքային	4	3	3	6	6	-	2	12
Համատեղող	1	-	-	1	1	-	-	1
Ժամավճարային	-	-	-	-	-	-	-	-
Ընդա-մենը	5	3	3	7	7	-	2	13

2. ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Ամբիոնը ուսումնամեթոդական գործունեությունը հաշվետու տարում:
Հաշվետու տարում ամբիոնի ուսումնամեթոդական գործունեությունը գնահատվում է դրական, քանի որ դրա իրականացման ապահովմանը նպաստող տարբեր մեխանիզմներ են ներդրվել և գործադրվլ են արդիականացմանն ուղղված ջանքեր: Մասնավորապես, վերանայվել են դասավանդվող բոլոր առարկաների նկարագրերը, պատրաստվել են հեռավար ուսուցման դասախոսությունների փաթեթներ կոնկրետ կուրսերի ուսանողների համար, աշխատանքներ են տարվել կրթական էլեկտրոնային նորագույն տեխնոլոգիաներով և ինտերակտիվ մեթոդներով լրամշակված առարկայական ուսումնամեթոդական փաթեթների պատրաստման շարունակականության ապահովման ուղղությամբ: Դասավանդողներին լուսաբանվել են կրթական էլեկտրոնային նորագույն տեխնոլոգիաներով և ինտերակտիվ մեթոդներով լրամշակված առարկայական ուսումնամեթոդական փաթեթների պատրաստման առանձնահատկությունները:

Ամբիոնի աշխատակիցների ուսումնամեթոդական հրատարակումների քանակը					
Դասագրքեր			Ուսումնական ձեռնարկներ		
ՀՊՄՀ դասիչով	ՀՀ ԿԳՆ դասիչով	Այլ դասիչներով	ՀՊՄՀ դասիչով	ՀՀ ԿԳՆ դասիչով	Այլ դասիչներով
		2			

Ամբիոնի մեթոդական կոնֆերանսների և սեմինարների քանակը									
Միջազգային		Հանրապետական		Քաղաքային		Համալսարանական		Ամբիոնային	
կոնֆ.	սեմ.	կոնֆ.	սեմ.	կոնֆ.	սեմ.	կոնֆ.	սեմ.	կոնֆ.	սեմ.
		1							

3. ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Ամբիոնի հետազոտական գործունեությունը:
Ամբիոնի դասախոսները հեռազոտություններ են իրականացնում իրենց հետաքրքրությունների շրջանակում:
Ամբիոն ՊԴԱ և ուսանողների գիտակահետազոտական աշխատանքները, հրապարակումները, անցկացրած կոնֆերանսները, սեմինարները, օլիմպիադաները հաշվետու տարում:
Ամբիոնի դասախոսները պարբերաբար ներկայացրել են իրենց մանկավարժական և գիտական գործունեությանը վերաբերող տեղեկատվություն, որը քննարկվել է ամբիոնի նիստերում և ստացել համապատասխան ձևակերպում:
Ամբիոնի հաշվետու տարում իրականացրած հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման միջոցառումները:
Ամբիոնի դասախոսների կողմից 2020 թվականին հրատարակված աշխատությունները գործուն ազդեցություն են ունեցել ուսումնական գործընթացի հետագա զարգացման վրա և իրականացվել են գիտություն-կրթություն-դասընթաց փոխկապակցված մեխանիզմների համատեքստում:

Ա. Պրոֆեսորադասախոսական

ՊԴԱ-ի կողմից հրատարակված մենագրություններ			
Հեղինակ Ա.Ա.Հ.	Մենագրության անվանումը	Հր.անուն և տարի	Ծավալ
Լևոն Շիրինյան	Հայաստանը իրավաքաղաքական իրողությունների սահմաններում	Երևան 2020	400 էջ

Ամբիոնի աշխատակիցների գիտական հոդվածներ և ժողովածուներ, զեկույցներ և թեզիսներ		
Հեղինակ Ա.Ա.Հ.	Հոդվածի , զեկույցի անվանումը	Ծավալ
Փխրիկյան Ալինա	«Դատարանի սկանդալիզացիա» երեվույթի պատմահամեմատական վերլուծությունը	8 էջ
Սուքիասյան Հայկ	Առաջին Հանրապետության քաղաքական կազմակերպման հարցի շուրջ:	12 էջ
Սարվազյան Լիլիթ	Ընտանեկան հարաբերությունների կարգավորման իրավական հիմքերը Սմբատ Սպարապետի «Դատաստանագրքում	15 էջ
Sarvazyan Lilit	Argumentation of government source, forms and state sovereignty in “Armenian code of laws” by Mkhitar Gosh»	12 էջ
Սարվազյան Լիլիթ	Մկրտիչ Խրիմյանի փիլիսոփայաքաղաքական հայացքները «Սիրաք եւ Սամուէլ» աշխատության մեջ (Ծննդյան 200-ամյակի առիթով)	12 էջ
Շիրինյան Լևոն	Экстраполяция как метод научного прогнозирования	-
Մարուքյան Գայանե	Պարտավորությունների կատարման ապահովման միջոցների հասկացությունըև տեսակները, իրավակարգավորման հիմնախնդիրները ՀՀ օրենսդրությամբ	8 էջ
Տոնոյան Նարինե	Ընտաեկան բռնությունը որպես բռնության տարատեսակ,ընտանեկան բռնության քրեաիրավական բնութագիրը	11 էջ
Տոնոյան Նարինե Խաչատրյան Լևոն	Դատավորի գործունեության երաշխիքների ապահովումը ՀՀ դատական համակարգում	11 էջ
Marukyan Gayane	Evolution of Entrepreneurial Contracts Development: Brief Historical Digression /SCOPUS/	11 էջ

4. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Ամբիոնի արտաքին կապերի և միջազգայնացման աշխատանքների ընդհանուր նկարագրությունը և

վերլուծությունը հաշվետու տարում:
Հունգարիայի Պիտեր Պազմանի անվան կաթոլիկ համալսարանի հետ իրականացված ուսանողների, դասախոսների գիտամանկավարժական փորձի փոխանակման արդյունքում երկուստեք բարձրացել է դասավանդվող առարկաների, դրանց ուսումնագիտական ուղղվածության, մատչելիության և հրապարակայնության աստիճանը:
Ամբիոնի համագործակցությունը տեղական և միջազգային հաստատությունների և կառույցների հետ հաշվետու տարում:
Ամբիոնը համագործակցում է գերմանական Ֆրիդրիխ Հեբերտ հիմնադրամի հետ: Համագործակցության արդյունքում մշակվել են համապատասխան ծրագրեր և ժամանակացույց՝ գործընթացները հետագա տարիներին շարունակելու առումով:

5. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ԵՎ ՄԱՐՔԵԹԻՆԳԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Ամբիոն աշխատանքը հանրության շրջանում և հանրակրթական դպրոցների աշակերտների հետ, կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի մեխանիզմները:
Հասարակագիտության ամբիոնը հաշվետու տարում սահմանված ժամանակացույցին համապատասխան կազմակերպել է առկա և հեռակա ուսուցման համապատասխան կուրսերի առցանց մանկավարժական պրակտիկան: Պրակտիկայի խմբերի ղեկավարները ապահովել են համագործակցություն դպրոցի և բուհի միջև: Համավարակի հետ կապված՝ ամբիոնի կողմից չեն կազմակերպվել 2021-2022 ուսումնական տարվա ընդունելության վերաբերյալ ավագ դպրոցների շրջանավարտներին տեղեկատվության իրազեկման այցեր, որոնք համակարգում էին ամբիոնի վարիչն ու դասախոսները: Հնարավորության դեպքում այդ այցերն անպայման կկազմակերպվեն:

6. ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ

Ներկայացնել որակի ապահովման ներքին համակարգի աշխատանքները և արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը:
Հասարակագիտության ամբիոնի կողմից իրականացվել է Որակի ներքին ապահովման համակարգի քաղաքականության հստակեցում հաշվետու տարվա համար: Ամբիոնը հաշվետու տարում ունեցել է որակի ապահովման մշակված համակարգ և պատասխանատու: Հաշվետու տարում ամբիոնի վարիչը, հետո նաև վարիչի պաշտոնակատարը դասախոսների հետ պարբերաբար իրականացրել է դասախոսների դասալսումների և դրանց արդյունքների քննարկման մոնիտորինգ: Առանձնացվել են այն հիմնական ուղղություններն ու գործընթացները, որոնք առավել արդյունավետ են դասընթացն արդի պայմաններին համապատասխան կազմակերպելու և անցկացնելու համար:
Ներկայացնել գործընթացներում ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածության աստիճանը և վերլուծել արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:
Որակի ապահովման գործընթացների կառավարման տեսանկյունից Հասարակագիտության ամբիոնի առարկայական նկարագրերի և Էլեկտրոնային ԱՈՒՄՓ-ների քննարկում պրոֆեսորադասախոսական կազմի կողմից՝ ուսումնական գործընթացի որակի ապահովման նպատակով: Մասնակցություն ներամբիոնային և համահամալսարանական օղակներում որակի ապահովման խնդիրների քննարկմանը: Ամբիոնի մագիստրոսական ատենախոսությունների կատարման ընթացքի վերահսկում՝ որակի ապահովման տեսանկյունից: Ամբիոնի դասընթացների դասավանդման ուսումնառության և արդյունավետության գնահատման մշտադիտարկում: Հաշվետու տարում ամբիոնի կողմից կատարվել են համեմատություններ դպրոցական ծրագրերի հետ: Պետք է նկատել, որ Հասարակագիտության մասնագիտացման կրթական ծրագիրը գրեթե ամբողջովին համապատասխանում է հանրակրթության Հասարակագիտություն առարկայական ծրագրերին: Հասարակագիտության մասնագիտական կրթական ծրագրում ներառված և ամբիոնի

կողմից դասավանդվող դասընթացները լիովին համապատասխանում են հանրակրթության Հասարակագիտություն առարկայական ծրագրերին: Իրավագիտություն /մանկավարժություն/ մասնագիտական կրթական ծրագիրը վերաբերում է միայն մագիստրատուրային, քանի որ բակալավրիատում ընդունելություն 2016-2017 ուստարուց սկսած տեղի չի ունեցել:

Ամբիոնի դասախոսների կատարած աշխատանքի որակի ապահովում և մշտադիտարկում		
Միջոցառման անվանումը	Պատասխանատու	Արդյունքահենություն
Դասալսումներ	Ամբիոնի վարիչ /պաշտ./	Դասընթացների ինտերակտիվ, արդյունավետ կազմակերպում, Լավագույն փորձի փոխանակում
ՀՊՄՀ էլեկտրոնային ***Google Classroom*** հարթակում կատարված աշխատանքների մշտադիտարկում	Ամբիոնի վարիչ /պաշտ./ Ամբիոնի մասնագետ	Դասընթացների մշտադիտարկում, Դասախոսական աշխատանքի արդյունավետության բարձրացում